



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 1-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի նիստի հետևյալ **օրակարգը**.

1.1. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 59-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.2. Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու և Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 33-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.3. «Հայաստանի Համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը անդամակցելու մասին.


զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարելու համաձայնություն տալու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գները և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան

1.5. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 16/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վճարի գինը և պայմանները հաստատելու և Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 18-ի N 11-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան



1.6. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.7. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան

1.8. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Կեչուտ գյուղի 7-րդ փողոցի 17-րդ շենքի N 2 բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.9. Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 60-Ա որոշման հավելված 2-ում փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.10. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2017 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.11. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի արվեստի դպրոցներում ուսման վարձի և նախադպրոցական ու մարզական հիմնարկներում ծնողական վճարների 2017 թվականի ամսական չափերը և համայնքի ճոպանուղու կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափը սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.12. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2017 թվականի դրույքաչափեր սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.13. Ջերմուկ համայնքի բյուջեի 2017 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.14. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.15. Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները վարձակալությամբ օգտագործման տրամադրելու և ամսական վարձավճարի չափն ու պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.16. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Ն որոշմամբ հաստատված կարգում փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.17. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.18. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի զարգացման 2017-2021 թվականների ծրագրի հաստատման մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.19. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող համայնքային սեփականության հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բաբայան</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>[Signature]</i>		
Բազրատյան Արտակ Կառլենի	<i>[Signature]</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>[Signature]</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>բաբայան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>[Signature]</i>		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>[Signature]</i>		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	<i>բաբայան</i>		

Սարգսյան Հասմիկ Ժորայի	800.2		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	26.7		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	2000		

Որոշումն ընդունված է՝ կողմ- 8 դեմ- 0 ձեռնպահ- 0...




ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

[Handwritten signature]

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 հունվարի 16
Ջերմուկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 2-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 59-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» N 59-Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով. «1.1 «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերին համապատասխան ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 34-Ա որոշումը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնակահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բաբայան</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>ԲԶ</i>		
Բազրատյան Արտակ Կառլենի	<i>ԲԶ</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>ԲԶ</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>բաբայան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>ԳԶ</i>		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>ՀԶ</i>		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	<i>բաբայան</i>		
Սարգսյան Համիկ Ժորայի	<i>ՍԶ</i>		

Սիմոնյան Արտուշ Էդվարդի	16/1		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	12/2		

Որոշումն ընդունված է՝ կողմ- 8 դեմ- 0 ձեռնպահ- 0


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 հունվարի 16
Ջերմուկ







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 3-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՒ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ. ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 33-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի (վերջին պարբերության) ^{39-րդ} հիման վրա և Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» 109-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացմանն օժանդակելու և ստացված փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 11-րդ և 12-րդ կետերի համաձայն հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը.

հանձնաժողովի նախագահ՝ *Թադևոսյան Գ.* - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

հանձնաժողովի անդամներ՝ *Սաֆարյան Ա.* - համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ

Քոլայան Ա. - Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Կարապետյան Ս. - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Սարգսյան Զ. - Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարանի տնօրեն

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի «Ջերմուկի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու և Ջերմուկի համայնքի ավագանու 2011 թվականի ապրիլի 30-ի N 20-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 33-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝


ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բաբայան</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>չի մասնակցել</i>		
Բագրատյան Արտակ Կառլենի	<i>[Signature]</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>[Signature]</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>բաբայան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>[Signature]</i>		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>[Signature]</i>		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	<i>բաբայան</i>		
Սարգսյան Հասմիկ Ժորայի	<i>[Signature]</i>		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	<i>[Signature]</i>		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	<i>[Signature]</i>		

Որոշումն ընդունված է՝ կողմ- *7* դեմ- *0* ծեռնպահ- *0*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ Վ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ



2017 հունվարի 16
Ջերմուկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 4-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի համայնքների միության» գործադիր տնօրեն Ն.Լափաուրիի 16.11.2016թ. թիվ ԵՆ-1611/1144 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **ա վ ա գ ա ն ի ն ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Հաշվի առնելով, որ «Հայաստանի համայնքների միության» հանրապետական խորհուրդը 2016 թվականի նոյեմբերի 9-ի նիստով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2016 թվականին «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում կատարած փոփոխությունները, կայացրել է արձանագրային որոշում Հայաստանի համայնքների միությանը խոշորացված նախկին համայնքների անդամակցությունն օրենքի ուժով դադարեցնելու մասին՝ տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի միավորված Ջերմուկ համայնքին անդամակցել «Հայաստանի Համայնքների Միության» իրավաբանական անձանց միությանը:

2. Հայաստանի Համայնքների Միությանը տարեկան պարբերականությամբ փոխանցել անդամության հաշվարկված վճարը՝ մեկ բնակչի հաշվով տարեկան 10 դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բաբայան</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>[Signature]</i>		
Բազրատյան Արտակ Կառլենի	<i>[Signature]</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>[Signature]</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>բաբայան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>[Signature]</i>		

Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	<i>բաղաճ</i>		
Սարգսյան Հասմիկ Ժորայի	<i>ԲՈՒ</i>		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	<i>ԲՈՒ</i>		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- 8 դեմ- 0 ձեռնպահ- 0 ..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

[Signature]

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 հունվարի 16
Ջերմուկ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻԱ Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 5-Ա

ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ
ԳՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Համաձայնվել Զերմուկ համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Զերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը, մեկնարկային գինը և նախատեսված օբյեկտի կառուցման ժամկետը համաձայն աղյուսակի.

հողամասի օտարման նպատակը	հողամասի հասցեն	Մակերե- սը ,հա	մեկնարկա- յին գինը,դրա- մ	կառուցապատ- ման ժամկետը	հողամաս ի ծածկագի- րը	նպատակային նշանակությունը	գործառնական նշանակություն ը (հողատեսքը)
բնակելի կառուցապատման համար	ք. Զերմուկ, Ձախալին յակ, 6-րդ փողոց, N 7	0,0024	24 000	3 տարի	10-002- 0031- 0189	բնակավայրերի	բնակելի կառուցապատ- ման
հասարակական կառուցապատման համար	ք. Զերմուկ, Շահումյան փողոց N 20/3	0,04	498 000	3 տարի	10-002- 0018- 0046	բնակավայրերի	հասարակակա- ն կառուցապատ- ման
բջջային կայանի կառուցման համար	գ. Կարմրաշ- են, 16-րդ փողոց, N 1	0,02	80 000	1 տարի	10-027- 0122- 0021	էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածք ների օբյեկտների	կապի

գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերիեր	1	33750	-	10-028-0149-	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերիեր	3	101250	-	10-028-0167-0023	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերիեր	0,8	27 000	-	10-028-0149-0118	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերիեր	5,2	175500	-	10-028-0151-0007	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերիեր	0,05	1687	-	10-028-0172-0024	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերիեր	0,56346	19016	-	10-028-0172-0021	գյուղատնտեսական	այլ հողատեսք
գյուղատնտեսական գործունեության համար	գ. Հերիեր	1,8888	188880	-	10-028-0101-0027	գյուղատնտեսական	արոտավայր

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բազրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Համիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			


Որոշումն ընդունված է՝ կողմ-.....8..... դեմ-.....0..... ձեռնպահ-.....0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 հունվարի 16
Ջերմուկ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 6-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 16/3
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՁԵՂՅԱԼ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2 կետի՝ ավագանին
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 16/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 209.3 քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի նշանակությամբ հողամասի կառուցապատման իրավունքը մրցույթով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի մեկնարկային գինը սահմանել 260 000 (երկու հարյուր վաթսուոց հազար) դրամ, ժամկետը՝ 2032 թվականի հունվարի 1-ը, նպատակը՝ հասարակական օբյեկտ կառուցելու համար:

3. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի հիման վրա չեղյալ ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 18-ի «Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող հողերը օտարելու համաձայնություն տալու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գները և պայմանները հաստատելու մասին» N 11-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բաբայան</i>		4


Բարաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բալանս		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բալանս		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- 8 դեմ- 0 ձեռնպահ- 0



2017 թվականի 16
Ջերմուկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Վ. ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 7-Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 12.06.2014թ. «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում «Հրազդան ԶԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման մասին» N599-Ն որոշման պահանջները՝ ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**





1. Վայոց ձորի մարզի Զերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի տարածքում գտնվող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 10-016-0228-0083, 10-016-0228-0085 և 10-016-0229-0049 կադաստրային ծածկագրերով 774 քմ ընդհանուր մակերեսով վարելահողի՝ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ՎՋՄԲ կողմից ֆինանսավորվող «Էլեկտրակառավարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ԶԷԿ-ը Շինուհայր ենթակայանին միացնող 220 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման համար:

2. Խնդրել Վայոց Ձորի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ Կառավարության քննարկմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի <i>բաբայան</i>			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի <i>ԲԶ</i>			
Բագրատյան Արտակ Կառլենի <i>ԲԲ</i>			

Բունիության Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>բաղյան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	<i>բաղյան</i>		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումը ընդունված է՝ կողմ-.....8..... դեմ-.....0..... ձեռնպահ-.....0.....



ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 իունվարի 16
Ջերմուկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 8-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հավանություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. Գնդեվազ գյուղի բնակիչներ Խորեն Վանուշի Խաչատրյանի, Անի Խորենի Խաչատրյանի և Նարեկ Խորենի Խաչատրյանի ընդհանուր բաժնային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բաբայան</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>ԲԵ</i>		
Բազրատյան Արտակ Կառլենի	<i>ԲԶ</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>ԲԽ</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>գևորգյան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>ԳԶ</i>		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>ՀԶ</i>		

Հովհաննիսյան Նարեկ Հարությունի <i>բաղաճա</i>			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	<i>Մի...</i>		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	<i>...</i>		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			


Որոշումն ընդունված է՝ կողմ- *8* դեմ- *0* ձեռնպահ- *0*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Կ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ



2017 հունվարի 16
Ջերմուկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 9-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԿԵԶՈՒՏ ԳՅՈՒԴԻ 7-ՐԴ
ՓՈՂՈՑԻ 17-ՐԴ ՇԵՆՔԻ N 2 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ
հոդվածի 21 -րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Կեչուտ գյուղի
7-րդ փողոցի 17-րդ շենքի N 2 բնակարանը, մակերեսը՝ 101,27 քմ, համատարած
սեփականաշնորհման գործընթացից դուրս մնացած համայնքի բնակիչ,
այդ բնակարանը օգտագործող և տիրապետող Կեչուտ գյուղի բնակիչ Արփենիկ Ազատի
Ստեփանյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին
համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բաբայան</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>ԲԵ</i>		
Բազրատյան Արտակ Կառլենի	<i>ԲԵ</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>ԲԵ</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>բաբայան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>ԲԵ</i>		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>ԲԵ</i>		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	<i>բաբայան</i>		
Սարգսյան Հասմիկ Ժորայի	<i>ԲԵ</i>		

Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ-...8... դեմ-...0... ձեռնպահ-...0...


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



2017 հունվարի 16
Ջերմուկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 10-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 60-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և նույն հոդվածի 5-րդ կետով ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարի ամսական վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 60-Ա որոշման հավելված 2-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնային դրույքաչափը սահմանել 310 000 դրամ

բ) տեղեկավարական համակարգի օպերատորի պաշտոնային դրույքաչափը սահմանել 141603 դրամ

գ) հավաքարարի պաշտոնային դրույքաչափը սահմանել 130 000 դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>Բաբայան</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>ԲԶ</i>		
Բազրատյան Արտակ Կառլենի	<i>ԲԶ</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>ԲԶ</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>Բաբայան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>ԳԶ</i>		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>ՀԶ</i>		

Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բաղադր		
Սարգսյան Հասմիկ Ժորայի	Վ.Է.		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ-.....8..... դեմ-.....0..... ձեռնպահ-.....0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

[Signature]

Կ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 հունվարի 16
Ջերմուկ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 11-Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 26-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2017 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 և 2 հավելվածների:

2. Ջերմուկ համայնքի արվեստի դպրոցներում դասատուների, Ջերմուկ համայնքի մանկապատանեկան մարզադպրոցում և «Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ում մարզիչների, Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարանում մատենագետի և գրադարանավարների, ««ԶԱՏԻԿ» մանկապարտեզ ՆՈՒՀ» և «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներում դաստիարակների համար հաստատել հետևյալ դրույքաչափերը.

ա/ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներ՝

- մինչև 15 տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ - 110 000 դրամ


- 15 և ավելի տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ - 120 000 դրամ

բ/ բարձրագույն կրթություն ունեցողներ

- մինչև 15 տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ - 115 000 դրամ

- 15 և ավելի տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ - 125 000 դրամ

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունվարի 26-ի N 29-Ն հրամանի 3-րդ և նշյալ հրամանով հաստատված N 1 հավելվածի 25-րդ կետերին համապատասխան, հաշվի առնելով, որ ամառային սեզոնի հետ կապված ավելանում է երիտասարդ կանանց զբաղվածությունը, որի հետևանքով կտրուկ ավելանում է նախադպրոցական տարիքի երեխաներին «Զատիկ» մանկապարտեզում ժամանակավորապես տեղավորելու դիմումների քանակը՝ իրավունք



վերապահել մանկապարտեզի տնօրենին, համայնքի ղեկավարի որոշմամբ, ըստ անհրաժեշտության ավելացնելու խմբերի քանակը 1-ից 2-ով: Նման խմբերում աշխատողներին ընդունել պայմանագրային հիմունքներով՝ սահմանված կարգով կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

5. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի հիման վրա ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2016 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 6-Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բացակա</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>ՍԻ</i>		
Բագրատյան Արտակ Կառլենի	<i>ՍԻ</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>ՍԻ</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>բացակա</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>ՍԻ</i>		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>ՍԻ</i>		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	<i>բացակա</i>		
Սարգսյան Հասմիկ Ժորայի	<i>ՍԻ</i>		
Միմոնյան Արտուշ Էդվարդի	<i>ՍԻ</i>		
Ստեփանյան Գագիկ Մանուկի	<i>ՍԻ</i>		



կողմ- 8..... դեմ- 0..... ծեռնպահ- 0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

[Signature]

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ


**ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի համայնքային
ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների
հաստիքացուցակները և աշխատավարձերի պաշտոնային
դրույքաչափերը՝**

**1. «Ջերմուկի համայնքի «Ջարիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ
աշխատակիցների թվաքանակը՝ 27**

Ը/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	170 000	170 000
2.	Հաշվապահ	1	136 000	136 000
3.	Մեթոդիստ ուսումնական գծով	1	120 000	120 000
4.	Դաստիարակ	4.48	110 000	492800
5.	Դաստիարակ	2.24	120 000	268800
6.	Երաժշտության դաստիարակ	1.5	115000	172 500
7.	Պարուսույց	1.25	115 000	143750
8.	Դաստիարակի օգնական	6	100 000	600 000
9.	Գործավար	1	100 000	100 000
10.	Տնտեսվար	1	100 000	100 000
11.	Խոհարար	1	100 000	100 000
12.	Խոհարարի օգնական	1	100 000	100 000
13.	Էվագարար	1	100 000	100 000
14.	Օժանդակ բանվոր	1	100 000	100 000
15.	Դռնապահ	1	100 000	100 000
16.	Պահակ	2	100 000	200 000
17.	Բուժքույր	1	100 000	100 000
	Ընդամենը	28,47	1986000	3103850

**2. «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ 2.1 ԴՊՐՈՅ» ՀՈԱԿ
աշխատակիցների թվաքանակը՝ 18**

Ը/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	տնօրեն	1	170 000	170 000
2.	հաշվապահ	0.5	136 000	68000
3.	գործավար	0.5	136000	68000
4.	տնտեսվար	1	100000	100000
5.	հավաքարար	2	100000	200000
6.	երգչախմբի ղեկավար	1	110000	110000
7.	դասատու	1.958	110 000	215380
8.	դասատու	0.59	110 000	64900
9.	դասատու	0.75	115000	86250
10.	դասատու	0.863	115000	99245
11.	դասատու	0.917	120000	110040
12.	դասատու	1.136	120000	136320
13.	դասատու	0.5	125000	62500
	Ընդամենը	12.214	1692000	1490635



ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱԳԱՐԱՆՆԵՐ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
14.	դասատու	0.916	110 000	100760
15.	դասատու	1.273	110 000	140030
16.	դասատու	0.458	125000	57250
	<i>Ընդամենը</i>	<i>2.647</i>	<i>470000</i>	<i>298040</i>


3. «ԶԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ Հ.Հ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 24

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	տնօրեն	1	170 000	170 000
2.	հաշվապահ	0.5	136 000	68000
3.	գործավար	0.5	136 000	68000
4.	տնտեսավար	1.5	100000	150000
5.	հավաքարար	1.5	100000	150000
6.	երգչախմբի ղեկավար	1	110000	110000
7.	դասատու	2.125	110000	233750
8.	դասատու	0.863	110 000	94930
9.	դասատու	0.34	115000	39100
10.	դասատու	2.432	115000	279680
11.	դասատու	6.396	120000	767520
12.	դասատու	1.705	120000	204600
13.	դասատու	0.584	125000	73000
14.	դասատու	0.273	125000	34125
	<i>Ընդամենը</i>	<i>20,718</i>	<i>1692000</i>	<i>2442705</i>

ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱԳԱՐԱՆՆԵՐ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
15.	դասատու	0.229	115 000	26335
16.	դասատու	0.916	115 000	105340
17.	դասատու	1.273	125 000	34125
18.	դասատու	0.5	125000	57250
	<i>Ընդամենը</i>	<i>1.918</i>	<i>480000</i>	<i>228300</i>



4. «ՋԵՐՄՈՒԿԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 3

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	տնօրեն	1	150 000	150 000
2.	ակումբավար	1	120000	120000
3.	հավաքարար	0.5	100000	500000
	Ընդամենը	2.5	370000	320000

5.

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԵՆ ԱՐԱՐԱՏԻ ԱՄՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ


Աշխատակիցների թվաքանակը՝ 3

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	տնօրեն	1	142000	142000
2.	մարզիչ	1.5	125000	187500
3.	հավաքարար	0.5	100000	50000
	Ընդամենը	3	367000	379500

6. ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՆԴԵՎԱԶԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 8

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	142 000	142 000
2.	Հաշվապահ	0.5	120000	60000
3.	դաստիարակ	2,24	115000	257600
4.	Երաժշտության դաստիարակ	0.5	115000	57500
5.	Դաստիարակի օգնական	2	100000	200000
6.	Գործավար	0.5	100000	50000
7.	Տնտեսավար	0.5	100000	50000
8.	Խոհարար	1	100 000	100000
9.	Խոհարարի օգնական	0.5	100 000	50 000
10.	Օձանդակ բանվոր	0.5	100 000	50000
11.	դռնապահ	1	100 000	100 000
12.	բուժքույր	0.5	100 000	50000
	Ընդամենը	10,74	1292000	1167100



7. «ԶԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ
Աշխատակիցների թվաքանակը՝ 31

Վարչական մաս


Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	265000	265000
2	Հաշվապահ-գործավար	1	175000	175000
3	Ճարտարագետ	1	185000	185000
4	Օպերատոր-պահեստապետ	1	145000	145000
5	հսկիչ	1	81000	81000
6	պահակ	2	81000	162000
	Ընդամենը	7	932000	1013000

Համայնքի արտաքին ցանցի լուսավորվածության սպասարկում

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	էլեկտրիկ	1	110000	110000
2	վարորդ	0.5	140000	70000
	Ընդամենը	1.5	250000	180000

Համայնքի սանիտարական մաքրում

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	Բրիգադավար	1	155000	155000
2	Բանվոր	3	110000	330000
3	Փականակագործ-գողող	1	81000	81000
4	Մեխանիկ փականակագործ	1	150000	150000
5	Հավաքարար	1	113500	113500
6	Հավաքարար	12	100000	1200000
7	Վարորդ	3	140000	420000
8	տրակտորիստ	2	140000	280000
	Ընդամենը	7	989500	2729500



Աղբահանություն և բարեկարգում

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	վարորդ	1	175000	175000
2	բանվոր	1	140000	140000
	Ընդամենը	2	315000	315000

սեզոնային հաստիքներ 01.04.2017 - 01.11.2017թթ.

Ժամանակահատվածի համար

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	բանվոր	2	110000	220000
2	հավաքարար	4	100000	400000
	Ընդամենը	6	210000	620000

Սեզոնային հաստիքներ 01.01.2017-01.04.2017թթ. և 01.11.2017-30.12.2017թթ.


Ժամանակահատվածների համար

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	ավտոգրեյդերավար	1	170000	170000
2	տրակտորիստ	1	140000	140000
	Ընդամենը	2	310000	310000

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար



Գոհար Թադևոսյան



«ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ենթակա բյուջեային հիմնարկների աշխատակիցների հաստիքացուցակները և աշխատավարձերի պաշտոնային դրույքաչափերը»

1. «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՊԱՆՈՒՂԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ


Աշխատակիցների թվաքանակը՝ 10

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	տնօրեն	1	170 000	170 000
2.	ղեկավար	1	100000	100000
3.	Հիդրավիլիկի մասնագետ	1	100000	100000
4.	էլեկտրիկ	1	100000	100000
5.	ռատրակավար	0.5	100000	50000
6.	տնտեսավաճառ	1	136000	136000
7.	հսկիչ	1	100000	100000
8.	օպերատոր	2	100000	200000
9.	Հավաքարար	2	100000	200000
10.	պահակներ	3	100000	300000
	Ընդամենը	13.5	1106000	1456000

2. «ՋԵՐՄՈՒԿԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍԱՐՋԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 4

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	տնօրեն	1	142 000	170 000
2.	Մարզիչ	0.5	125000	62500
3.	մարզիչ	1	115000	115000
4.	բուժբույր	0.5	100000	50000
5.	հավաքարար	1	100000	100000
	Ընդամենը	4	582000	469500



3. «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6


Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքի չափը	Գումարը
1.	տնօրեն	1	145 000	145 000
2.	մատենագետ	0.5	125000	62500
3.	գրադարանավար	3	120000	360000
4.	օպերատոր	1	115000	115000
5.	հավաքարար	1.5	100000	150000
	Ընդամենը	7	605000	832500

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝

Գ. Բաղդասարյան

Գոհար Թադևոսյան







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 12-Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒՍՄԱՆ
ՎԱՐՁԻ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՊԱՆՈՒՂՈՒ
ԿՈՂՄԻՅ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19 -րդ կետին համապատասխան ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է՝

1. Ջերմուկ համայնքի արվեստի դպրոցներում 2017 թվականի ուսման վարձի չափը սահմանել մեկ երեխայի հաշվով ամսական 3000 դրամ:
2. Ջերմուկի համայնքի ««ԶԱՏԻԿ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ում 2017 թվականի ծնողական վճարի չափ սահմանել մեկ երեխայի հաշվով Ջերմուկ քաղաքում՝ ամսական 7000 դրամ, Կեչուտ գյուղում և «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում 2017 թվականի ծնողական վճարի չափ սահմանել մեկ երեխայի հաշվով 5000 դրամ: Միևնույն ընտանիքից մանկապարտեզ հաճախող երկրորդ և հաջորդ երեխաների, ինչպես նաև միակողմանի ծնողագուրկ երեխաների ծնողական վճարի չափը զեղչել 50 տոկոսով:
3. Արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների ու երկկողմանի ծնողագուրկ երեխաներին ազատել սույն որոշման մեջ նշված վարձերի ու վճարների մուծումից: Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքից արվեստի դպրոցներ հաճախող երկրորդ և հաջորդ երեխաների, ինչպես նաև միակողմանի ծնողագուրկ երեխաների ծնողական վճարի չափը զեղչել 50 տոկոսով:
4. Ջերմուկի համայնքի մարզադպրոցում 2017 թվականի ծնողական վճարի չափ սահմանել մեկ երեխայի հաշվով ամսական 1000 դրամ:
5. Ջերմուկի համայնքի ճոպանուղու կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափը սահմանել 1500 դրամ՝ մեկ ուղևորի մեկ շրջապտույտի համար:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի <i>բաբայան</i>			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի <i>ԲԶ</i>			
Բազրատյան Արտակ Կառլենի <i>ԲԲԲ</i>			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի <i>ԲԲԲԲ</i>			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի <i>բաբայան</i>			
Գրիգորյան Արմեն Գրիշայի <i>Գ</i>			
Համբարձումյան Մխիթար Սամվելի <i>ԳԲ</i>			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի <i>բաբայան</i>			
Սարգսյան Հասմիկ Ժորայի <i>Ժ</i>			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի <i>Ս</i>			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի <i>ՍԲ</i>			


Որոշումն ընդունված է՝ կողմ- *8*..... դեմ- *0*..... ծեռնպահ- *0*.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 հունվարի 16
Զեքմուկ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017թ. N 13-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետին և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներին համապատասխան ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2017 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ծեռնալահ
Բաբայան Կավկազ Զավենի	<i>բաբայան</i>		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	<i>ԲԲ</i>		
Բագրատյան Արտակ Կառլենի	<i>ԲԲ</i>		
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	<i>ԲԲ</i>		
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	<i>բաբայան</i>		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	<i>ԲԲ</i>		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	<i>ԲԲ</i>		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	<i>բաբայան</i>		

Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ... 8 դեմ- ... 0 ձեռնպահ- ... 0 ..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Կ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 հունվարի 16
Ջերմուկ



Հավելված
ՀՀ Կարգ ձևը մարզի ջերմուկի համայնքի ավագանու
2017թ. հունվարի 16-ի թիվ 13-Ն որոշման

ՋԵՏՈՒԿ ՀԱՄԱԹՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՇԱՓԵՐԸ՝

Տեղական տուրքի անվանումը	Օրենքով սահմանված դրույթաչափը (դրամ)	Դրույթաչափը /ՀՀ դրամ/						Օրենքի 12-րդ հոդվածի մասը
		ք. Ջերմուկ	գ. Կեչուտ	գ. Գալեղավաղ	գ. Հերշեր	գ. Կարսիքաշեն		
1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համապատասխան շինարարական նախագծին (ներառյալ՝ ոչ նիւնսակա) շինարարության (տեղադրման) քաղաքական համար տեղական տուրքը սահմանում է՝								12.1
ա. <i>ճեմատի օրենքները համար</i>								12.1 ա
մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, փնջյալա եւս մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող իրավաբանական և արտադրական նպատակով օրենքների համար	15000	7500	2250	2250	2250	2250		
Մույն կետի ա ենթակետով չսահմանված օրենքների համար								12.1 բ
բ. <i>համար, այդ թվում՝</i>								
200-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օրենքների համար	30000	15.000	4500	4500	4500	4500		
500-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օրենքների համար	50000	25.000	7500	7500	7500	7500		
1000-ից մինչև 3000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օրենքների համար	50000	25.000	7500	7500	7500	7500		
3000 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օրենքների համար	100000	50.000	15000	15000	15000	15000		

Գ	Ինքնուրույն շինարարական աշխատանքների համար	12.1գ
•	մինչև 20 ք.մ. բնակարար մակերես ունեցող օբյեկտների համար	3000
•	20 և ավելի ք.մ. բնակարար մակերես ունեցող օբյեկտների համար	5000
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, բաղադրարարական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ հայրենասիրական համայնքային օբյեկտների) սահմանված շինարարության բաղադրարարական շինարարական գեղարվեստական կարգով իրականացվող աշխատանքների համար, եթե սահմանված կարգով իրականացվող աշխատանքները չեն ընդգրկվում համայնքի կառավարման կողմից	12.2
ա	Ջի սահմանված կառավարության, վերակառուցման, շենքերի վերակառուցման, շինությունների (այդ թվում՝ ստորգետնյա) իրականացման օբյեկտների վերակառուցման, շինարարության փոփոխություն	12.2 ա
բ	Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում են նաև կառավարության, վերակառուցման, շենքերի վերակառուցման, շինարարության փոփոխություն (այդ թվում՝ ստորգետնյա) իրականացման օբյեկտների վերակառուցման, շինարարության փոփոխություն, այսպես, բացի սույն կետի 1) կետից, եթե նախատեսվում է շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը, օբյեկտի վերակառուցման փոփոխություն կամ շենքերի գործարարական մակերեսի ավելացման կամ շենքերի գործարարական կառավարության փոփոխման մատուցում	12.2.բ

4	նախատեսվում է միայն կցակառուցների. վերնակառուցների. շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործարանական կառնակության փոփոխություն. ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը.								12.2.9
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական ստորքը սահմանվում է	5000	2500	750	750	750	750		12.3
4.	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացույցային տարվա համար	200000							12.4
5.	ՀՀ Կառավարության սահմանված ցանկում բնագրիկված սահմանափակումները և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում բացառությամբ միջոցառական և հանրապետական նշանակության ավտոմեքիկային հանապաղատեման կողմից հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մատակարար սահմանի կետերում ներքին վառելիքի (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և սեղմված հանքային հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական ստորքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	100000	75000	30000	30000	30000	30000		12.5

6	համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, ձեռքի վաճառքի, սննդի և բնական կամ ձեռքիցված նավթային գազերի մատակարար առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տնկերակազմ սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնկերակազմի հեղուկների վաճառքի թաղստեղծության համար տեղական տարբեր բնագավառի տարվա համար սահմանվում է	60000							12.6
7	ՀՀ կառավարության սահմանված ցանկից ընդգրկված առևտրականության և բարձր լեռնային համայնքների համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, ձեռքի վաճառքի, սննդի և բնական կամ ձեռքիցված նավթային գազերի մատակարար առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տնկերակազմ սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնկերակազմի հեղուկների վաճառքի թաղստեղծության համար տեղական տարբեր բնագավառի տարվա համար սահմանվում է	20000	15000	6000	6000	6000	6000		12.7
8	Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մատակարար առևտրականության թաղստեղծության համար տեղական տարբեր բնագավառի տարվա համար սահմանվում է	50000	37500	15000	15000	15000	15000		12.8

9	համայնքի վարչական տարածքում ոգելից և ալյուխալային խմիչքների և / կամ/ ծխախոտի ադուտադրանքիվաճառքի թաղիտվության համար՝								12.9
	Խորաքանջուր եռանյւթակի համար ոգելից և ալյուխալային խմիչքի վաճառքի թաղիտվության								12.9ա
•	համար՝ լողաքանյւթադ եռանյւթակի համար մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում	մինչև 10.001	7500	3000	3000	3000	3000		
•	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10001- 13.001	9750	3900	3900	3900	3900		
•	51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	13001- 20.001	15000	6000	6000	6000	6000		
•	101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	20001- 25.001	18750	7500	7500	7500	7500		
•	201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25001- 45.001	33750	13500	13500	13500	13500		
•	501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	45001- 100.001	75000	30000	30000	30000	30000		
բ	ծխախոտի ադուտադրանքի վաճառքի թաղիտվության համար թաղաքանյւթադ եռանյւթակի համար								12.9,բ
•	հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	մինչև 10.001	7500	3000	3000	3000	3000		
•	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10001- 13.001	9750	3900	3900	3900	3900		

•	31-ից մինչև 100 քառակուսի մետր ընդամասը սպաղսման ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	13001-20.001	15000	6000	6000	6000	6000	
•	101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդամասը սպաղսման ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	20001-25.001	18750	7500	7500	7500	7500	
•	201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդամասը սպաղսման ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25001-45.001	33750	13500	13500	13500	13500	
•	501 և անցի քառակուսի մետր ընդամասը սպաղսման ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	45001-100.001	75000	30000	30000	30000	30000	
10	իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների մատչելի 22 օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար	350	262.5	105	105	105	105	12.10
11	Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահույթով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, (սառնաձևերը), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է,							12.11
ա	առևտրի օբյեկտների համար	5 000-50 000	37500	15000	15000	15000	15000	12.11.ա
F	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	25000-100000	75000	30000	30000	30000	30000	12.11.բ
գ	բաղնիքների (սառնաձևերի) համար	200 000-500 000	200000	80000	80000	80000	80000	12.11.գ
դ	խաղատների կազմակերպման համար	500 000-1 000 000	375000	150000	150000	150000	150000	12.11.դ
ե	շահույթով խաղերի կազմակերպման համար	250 000-500 000	187500	75000	75000	75000	75000	12.11.ե
զ	վիճակախաղերի կազմակերպման համար	100 000-150 000	75000	30000	30000	30000	30000	12.11.զ

12	համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սենյիկազմակերպման և իրացման բույսերի պահպանման տեղական տարբեր յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝								12.12
III	Խիմնական շինությունների ներքում								12.12
•	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	մինչև 5.001	2500	1000	1000	1000	1000	1000	
•	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	5001 - 10.001	5000	2000	2000	2000	2000	2000	
•	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	10001 - 15.001	7500	3000	3000	3000	3000	3000	
•	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	15001 - 20.001	15000	6000	6000	6000	6000	6000	
•	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	20001 - 30.001	22500	9000	9000	9000	9000	9000	
•	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	30001 - 50.001	37500	15000	15000	15000	15000	15000	
IV	ոչ ինժեներական շինությունների ներքում								12.12
•	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	մինչև 1.001	500	200	200	200	200	200	
•	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	1001 - 2.001	1.000	600	600	600	600	600	
•	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	2001 - 4.001	3000	1200	1200	1200	1200	1200	
•	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	4001 - 8.001	6000	2400	2400	2400	2400	2400	
•	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	8001 - 15.001	11250	4500	4500	4500	4500	4500	
•	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սենյիկ օբյեկտի համար	15001 - 25.001	18750	7500	7500	7500	7500	7500	

13	Ջրաղբյուրի վնասվածությունը տվյալ տարվա դրությամբ տնտեսական տեսակի կենդանիների պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը բնթացիկ տարվա համար սահմանվում է օրացույցային տարվա համար՝	5000	3750	0	0	0	0		12.13
14	Համայնքի տարածքում յուրաքանչյուր անվա համար արտաքին գովազդի դաստարի գովազդային վաճառականների վեճ ջրառնային մետրի դիմաց տնտեսվում է տեղական տուրք՝								12.14
ա	պիտուկային սպիտակ պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2000	1500	600	600	600	600		12.14.ա
բ	թունդ պիտուկային (սպիտակ պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	3500	2625	1050	1050	1050	1050		12.14.բ
գ	սոցիալական գովազդի համար	0	0	0	0	0	0		12.14.գ
դ	այլ արտաքին գովազդի համար	1500	1125	450	450	450	450		12.14.դ
